

Դ. Առնիկյան

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Արփիար Արփիարյանը հանդիսանում է հայ դրականությունից և հրապարակախոսության ականավոր ներկայացուցիչներից մեկը: Լինելով իր անվան հետ են կապում 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական մտավորական կյանքի շատ հարցեր:

Նա եղել է արևմտահայ ռեալիստական արձակի հիմնադիրներից մեկը, դեռևս 80-ական թվականներին իր բազմաթիվ հոդվածներում տալով ռեալիզմի տեսական հիմնավորումը, լույս է ընծայել առաջին ռեալիստական նովելները «Կյանքի պատկերներ» վերնագրով և իր իմբագրած պարբերականներում տեղ և ուղղություն է տվել արևմտահայ նոր գրականության աչքի ընկնող ներկայացուցիչներին՝ Գրիգոր Զոհրաբ, Սրվանդ Գյուլան, Քլկատինցի, Երուսան և ուրիշներ:

Արփիարյանը իր հրապարակախոսական բազմաթիվ հոդվածներում պայքար մղելով ժամանակի անկումային դրականության դեմ, այն ազդեցության դեմ, որ պոլսահայ գրողներն ստանում էին ֆրանսիական ռեակցիոն գրականությունից, առաջ է քաշել գաղափարական, կյանքը հարազատորեն արտացոլող, այն վերափոխելու ձգտում ունեցող գրականության անհրաժեշտությունը, կոչ անելով արևմտա-եվրոպական գրականության փոխարեն հետևել ռուսական առաջավոր գրականության գծած ճանապարհին, Այս նպատակով է, որ իր հրատարակած պարբերականների էջերում Պուշկինի, Լեոմոնտովի, Տոլստոյի, Տուրգենևի, Ուսպենսկու, Գերցենի ստեղծագործություններին հատուկ տեղ է տվել:

Իր հրապարակախոսական և գրական գործունեության ամբողջ ընթացքում կոչ անելով պայքարել թուրքական բռնապետության դեմ, նա հայ ժողովրդի բախտը կապել է ռուս մեծ ժողովրդի հետ:

Արփիար Արփիարյանը ցարին և ցարական շինովնիկներին քննադատելով, անվերապահ դրվատանքով ու հիացմունքով է խոսել ռուս մեծ ժողովրդի և նրա առաջավոր կուլտուրայի ու գրականության մասին:

Հասարակական-քաղաքական կյանք մտնելով լիբերալ բուրժուազիայի շարքերում, Արփիարյանը հետզհետե կողմնորոշվել է դեպի առաջադիմական գաղափարախոսությունը և կանգնել դեմոկրատական դիրքերում: Նա ամբողջ արևմտահայ իրականության մեջ միակ գրողն է որ կյանքի վերջին տարիներին թի՛ հրապարակախոսական և թե՛ գեղարվեստական ստեղծագործություններում ողջունել է ռուսական առաջին ռեոլուցիան և հանգել է սոցիալական պայքարի գաղափարին:

* *

Իր երեսնամյա գրական և հրապարակախոսական գործունեության ընթացքում Արփիարյանը ստորագրել է գրականագիտական, քննադատական բազմաթիվ հոդվածներ: Այդ հոդվածների մեջ ընդթափանցում է հայ նոր գրակա-

նություն ականավոր դիմքերին: Նույն կարծիքներն էլ հայտնել ոչ միայն արևմտահայ գրեթե բոլոր հայտնի գրողների մասին, այլև արևելահայ շատ հեղինակների մասին (Աբովյան, Նալբանդյան, Սունդուկյան, Նազարյան, Աղայան, Պռոշյան, Շիրվանզադե, Բաֆֆի և այլն):

Այս հոդվածներում էլ, որ Առակերպել է իր տեսական, գրականագիտական ու գեղագիտական ըմբռնումները:

Արփիարյանի գրականագիտական ըմբռնումների հիմքում ընկած է գրականության գաղափարականությունը, հասրորեն օգտակար, կյանքը վերափոխելու կոչում ունեցող նպատակաւաղ գրականության անհրաժեշտությունը: Եւ այս պահանջներն էլ թելադրում էին սոցիալ-քաղաքական այն պայմանները, որ ստեղծվել էին 80-ական թվականների կեսերին, երբ ավելի էր սաստկացել համիդյան ռեակցիան, գրաքննական կաշկանդումները հասել էին արտառոց խստության, հետապնդվում էր ազատամիտ ամեն մի արտահայտություն, լինի այդ պարբերական մամուլում, հասարակական հավաքույթներում, թե անհատական խոսակցությունների մեջ:

Որոշ գրողներ, արտահայտվելով աստիճանաբար իր ռեակցիոն էությունը դրսևորող խոշոր բուրժուազիայի գաղափարախոսությունը, այն կարծիքն են պաշտպանում, թե այլևս անիմաստ է ազգային ազատագրական պայքարի մասին մտածելը, ինչ միևնույնն է, ամեն մի ազատամիտ շարժում անխուսափելիորեն դատապարտված է ձնշման և ունենալու է իր տխուր հետևանքները, թե Բուրքիան թույլ է մեծ պետությունների նկատմամբ, իսկ ուժեղ է իր հպատակ ժողովուրդների նկատմամբ, ուստի ավելի լավ է շարունակել դարավոր հնազանդությունը և վաշելել օսմանյան կայսրության մասնակի առանձնաշնորհումները՝ առևտրական լայն գործարքներ, պալատական պաշտոններ և այլն, քան պայքարի դուրս գալ սուլթանիզմի դեմ:

Ավելի մեծ թիվ են կազմում այն գրողներն ու հրապարակախոսները, որոնք իրենց ստեղծագործությունների առանցքը դարձնում են հուսալքումն ու թախիծը, անորոշ դեգերումը երազների գիրկը. զարկ են տալիս անկումալին մի գրականության:

Առաջանում է տեսաբանների մի խումբ, որը արձագանքելով ժամանակի ռեակցիոն գաղափարախոսության պաշանջներին, դեղարվեստական գրականության կոչումը համարում է մարդկային տառապանքի սփոփումը, վշտի փարատումը, գրականությունը նկատում է իբրև մի տեսակ ժամանցի նյութ:

Վնասակար այս թեզը փորձում է տեսականորեն հիմնավորել Գրիգոր Օտյանը (1834—1887), որը ենթարկվելով սուլթան Համիդի հետապնդումներին, փախել էր Փարիզ ու այնտեղ ապրում էր հուսահատ ու անորոշ վիճակ: Նա Փարիզից պարբերաբար գրականության ու արվեստի հարցերին նվիրված թվթակցություններ էր ուղարկում Պուլիս:

Եթե 1840—50-ական թվականներին Փարիզում գտնվող հայ երիտասարդների Պուլիս ուղարկած նամակներից վառող էր բուրում, նրանց նամակները մտքեր էին հուզում ու պատրաստում, ապա այժմ՝ Գրիգոր Օտյանի նամակները, թղթակցությունները գրված լինելով հանդերձ գրական անուրանալի տաղանդով, խուլ է ու մոմ էին բուրում, հուսահատություն ու վիշտ, աղոթք ու ինքնամոռացում, որոնց կարիքը չունեն Կ. Պուլսի ազատատենչ գաղափարներով տարված երիտասարդությունը: Օտյանը «ալ մեղմափայլ վերջա-

լույսը սիրով միստիկն էր, ու երիտասարդությունը միջօրեի կիզիչ արեղակովն է, որ կտաքսոնա, կվսուի, կբեղմնավորի ու կբեղմնավորե», — գրում է Արփիարյանը:

Այլևս բոլորովին «անկումապաշտ գրագետ մը», «երանությունը մահվան մեջ փնտռող հուսահատ մը» դարձած Ստյանը Փարիզից ուղարկած հիշյալ հոդվածներում և իր մտերիմներին ու բարեկամներին հասցեագրած անձնական նամակներում դեռևս 1883—84 թվականներից ձևակերպում է իր գրականագիտական, գեղագիտական ըմբռնումները, որոնք շատ նպաստավոր էին սուլթանական հայահալած կաշկանդիչ քաղաքականությանը: 1885 թվին, իր եղբորորդուն ուղղած մի նամակում Գրիգոր Ստյանը զարգացնելով այն միտքը, թե գիտությունն ի վիճակի չէ թափանցելու տիեզերքի գաղտնիքների մեջ, թե դա միայն աստծու գործն է, գրում էր. — «Այն աստծու գաղտնիքն է, հավատացյալը կխոնարհի, անհնադանդը կխոռովի, և հավատացյալը, որ աստուծո և իր արքայության կհավատա, կհանդարտի ու կմխիթարվի»:

Նույն՝ 1885 թվականին Ստյանը հրապարակ է նետում գրականության իդեալիստական, եկեղեցական, ըստ էության ոնակցիոն ու շատ վնասակար բնորոշումը, ավելի բացահայտ կերպով: Իր բրոջ՝ Եվփիմե Ստյանի թարգմանած «Աբրա Քոնսթանթին» վեպի համար գրած առաջաբանում փորձում է հիմնավորել այն թեզը, թե գեղարվեստական գրականության կոչումն է մոռացնել կյանքի տաղտուկը, վիշտը, թե նա կոչված է թնթերցողին փոխադրել երեվակայական մի աշխարհ, որը ավելի հաճելի է, քան իրականը, թե գրականությունը չսկսեք է զբաղվի հասարակական հարցերով:

Ստյանը, որ մի այլ առիթով հպարտությամբ դրում էր՝ «կյանքիս մեջ օր մը չէ եղած, որ չաղոթեմ», և դավանում էր այն սկզբունքը, թե «այս աշխարհը անցք մըն է միայն մեզի համար, կամուրջ մը», հիշյալ առաջաբանում իր միտքը ձևակերպում էր հետևյալ տողերով՝

«Վեպն ինչու է, որպեսզի մարդը մխիթարվի իրականությունեն: Այսպես է բոլոր թարգմանած վեպը, անուշ դուլնով, անուշ հոտով զատկի ծաղիկ, որ զատկի օրվան զգացումը կուտա մարդուն, կամ թե ըսեմ սերոնսիրտը, որ կը վռն առավոտուց բոլոր բուրմունքներ բերելով հետը, երբ ճնճղուկներն ու խայտիկներն իրենց բույներեն դուրս կելնեն ու օդին մեջ կը տարածվին ճլվլալով»¹:

Ստյանի նման մտածողներ շատ կային Պոլսում:

Ելիա Տեմիրճիպաշյանը (1851—1908), որ նախորդ տասնամյակում մի քանի հաջող էջեր էր ստորագրել, այժմ քաշված իր պատյանի մեջ, նետվում էր նիրվանայի գիրկը, իր նոր ստեղծագործություններում մերթ աղոթում էր, մերթ երկրպագում, մերթ ըմբոստանում, բայց միշտ հուսալքված, անհեռանկար, զառանցանքի մեջ: Լեզամ լեզվաբանական, նեղ մասնագիտական հոդվածների մեջ շնչասպառ «երազ, հրազ» էր ալաղակում, ինքնամոռացում քարոզում:

Նույնիսկ այն գրողները, որոնք աղ գահավաժ անկման ճանապարհին չէին, ևևու էին կանգնել քաղաքական հրատապ հարցերի հրահրումից: Ս. Տյուսաբը (1842—1901) շարունակում էր իր «բարոյ վեպերի» լույսընծայումը, որոնք

¹ Լյուսավիդ Հալևի—Աբրա Քոնսթանթին. Թարգմանեց Եվփիմե Գ Ստյան, 1883, Գ. Գալթա, 42 Գ:

շատ ավելի հրապարակախոսություններ էին, քան դեղարվեստական գործեր: Մեքենան իր առաջին վեպը «Թորոս Լևոնին» Կ. Պոլսում հրատարակելուց հետո հնարավորություն չէր ունեցել շարունակել և անցել էր Թիֆլիս:

50—60-ական թվականների արևմտահայ դեմոկրատական մամուլը՝ «Մեղուն», Ստ. Ոսկանի «Արևմուտքը» վաղուց փակվել էին: «Արևելյան մամուլը», «Արշալույս Արարատյանը» և ուրիշ լիբերալ թերթեր դարձել էին կատարյալ պահանջողական հրատարակություններ: Հսկող Պարոնյանի նման մի խոշոր հեղինակություն անգամ, որը 60—70-ական թվականներին իշխում էր դրական ասպարեզի վրա և սուր, խարազանող, շաղարական երգիծանքով դարձել էր պահանջողականության ահ ու սարսափը, այժմ իր դրիշը գերազանցապես տրամադրում էր Կ. Պոլսի բնտանեկան, բաղթենիական կյանքի քննադատությանը և իր «սիկար»-ների տեսրակներով հեռու էր անկում ապրող գրականության վրա ուժգին ներգործություն ունենալուց:

60-ական թվականներից սկսած հայ հասարակական մտքի վրա մեծ ազդեցություն ունեցող հայ թատրոնը գրեթե փակվել էր: Աչքի բնկնող բոլոր դերասանները՝ Պետրոս Աղամյանը, Աստղիկ և Սիրանուշ քույրերն անցել էին Կովկաս և խաղում էին Թիֆլիսի բեմում: Պոլսում տրվում էին գերազանցապես թուրքերեն լեզվով ներկայացույցներ, այն էլ մեծ մասամբ ֆրանսերենից թարգմանված զավեշտներ:

Այսպիսի գրական և հասարակական միջավայրում Գր. Օտյանի վնասակար գաղափարները կարող էին յայնորեն ներգործել ժողովրդի վրա:

Գրական և հրապարակախոսական ասպարեզ նոր մուտք գործած մի խումբ երիտասարդներ, միանգամայն տարբեր պահանջներ էին ներկայացնում գրականությանը: Նրանք, 80-ական թվականների մտավորական շարժման ղեկավար Արփիարյանի գլխավորությամբ, գտնում էին, որ գրականության կոչումն է ամենից առաջ կյանքի բազմակողմանի ճանաչողությունը և այդ կյանքի վերափոխմանը նպաստելը:

Սուր կերպով քննադատելով Օտյանի էսթետիզմը և անվերապահ հիացմունքը ամեն կարգի անկումային գրականության, հասկապես ֆրանսիական Իոր, գրականության նկատմամբ, Արփիարյանը այն կարծիքն էր հայտնում, որ Գր. Օտյանի քարոզած վարդապետությունը ըստ էության նույն եկեղեցական միստիցիզմն է, նրա գրականությունը՝ «հողնած սերնդի մը հեծկլտանք» է, իսկ եկեղեցական այդպիսի գաղափարախոսությամբ ու անկումային գրականությամբ անհնար է սնել նոր երիտասարդությունը, թե Գր. Օտյանը երբեք «կովող, մտրակող, հալածող ու հալածվող դրագետը չեղավ»:

Արփիարյանը «կոտրուկ, զարնող մի գրականություն» էր պահանջում, նա այն չարծիքին էր, որ հասարակական կյանքի վերափոխումը հնարավոր չէ միայն նորը շինելով, այլ պետք է քանդել հինը, իսկ հինը տեղի կտա միայն խիզախ ծառացումների առաջ: Գրողը պետք է ունենա ընթերցողի վրա ազդելու, նրան իր տրամադրության տակ պահելու, ուղղություն տալու կարողություն: Գաղափարական դրույր «պետք է քիչ շատ «չլերաց» մը, սան-էյուրը կրեա», որովհետև «գրականություն մը չիղերու կարող է, կոտրվի պետք ունի, որ զորանա և զորացնե ժողովրդին միտքն ու հոգին»:

Արփիարյանը «Արևելք»-ում և Մասիս-ում գրած իր մի շարք դրախոսական հոդվածներում՝ պարզաբանելով հանդերձ իր գրականագիտական էսթե-

աիկական ըմբռնումները, դրանց հիմնական ձևակերպումը տվեց նույն «Արքա Քոնսթանթին» վեպի հրատարակման առթիվ¹ Եր. Սոյանի առաջաքանի դեմ գրած հոդվածում, որը դարձավ մի տեսակ ծրագիր ուսուցիչական արձակի համար:

Ահա այդ հոդվածի հիմնական մասը:

«Նոր Սոյան էֆենդի կը հայտարարե՞թի «վաղն ինչո՞ւ է, որպեսզի մարդը մխիթարվի իրականությունեն», այս վճիռը կրնա՞նք իբր անհերքելի ճշմարտություն ընդունել: Մխիթարությունը վերջին ապավենն է, անոնց, որոնք իրենց ցավերուն այլևս դարձան շեն կրնա: հուսալ, իսկ արդի վիպասանությունը չուզե՜ր վշտերու սփոփանք հալածելով միայն շատանալ. այլ նաև կետ նպատակին է աջակցել անոնց, որ ընկերական թշվառությանց դարձան: Եւ ուրեքու հետամուտ են: Վեպը իրական կյանքի պատկերը կպարզե՜ և մեզի կմղե՜ ընկերական վիճակին վրա խորհրդանշելու: Ի՞նչ արդի երիտասարդությունը օր մը իր վիպասանները ունենա, որոնք ուսումնասիրեն մեր ամեն խավերու ցավերն ու վշտերը, տիրերանգ վրձինով մեր աչքերուն առաջ պատկերացնեն տարբախտությունաց նկարները, մեզի վկա ընեն մինչև իսկ ժանտատեսիլ տեսարաններու և մեղի ըսեն.

«— Ահա՛ չարիքը, մենք քննեցինք հիվանդությունը, բրինք հայ ընկերության սրտին ախտազնությունը, առաջ թող դան անոնք, որ հիվանդությանդ դարձաններուն վրա պիտի խորհին,

«Պիտի կրնա՞նք անոնց ըսել

«— Է՛ր զմեզ ի ճեմ կը հանեք ցավոց և տառապանաց հանդիսավայրերու: Մեզի ծաղկանց բուրաստանները միայն առաջնորդեցեք, երթանք Ոսփորի պուրակները, թռչուններու դայլայիկները լսենք, ծաղիկներու բուրումներովը զմայլինք: Մենք ի՞նչ գործ ունինք այն մութ ու խոնավ ճարկերը, ուր խշտիներու վրա դարիքն է հոգևարք: Դարշահոտություն կա հոն և մեր քյուզանդական ունդները շատ փափկասուն են:

«Դասական և վիպական դպրոցներու սիրահարները միայն պիտի կրնան այսպես խոսիլ: Բայց երև հրեմանք մըն է, ամեն զբոսանք մըն է այդ դպրոցներու պատկանիլ, սակայն սուրբ պարտականություն է աշակերտել իրականության: Պետք է, որ հայ երիտասարդությունը այդ պարտականությունը կատարե՛:

1885 թ. մարտ ամսին գրված այս տողերը մի հրավեր էին ուղղված գրական նոր ասպարեզ մոտեցող գրողներին, մի կողմ դեպի հասարակական կյանքը, դեպի պանդոկոտների ապրած խառնուրդ, նավահանգիստները գնալու, այնտեղի կյանքը արտացոլելու:

Արփիարյանի պահանջն էր անհատի փոխարեն գրականության առանցքը դարձնել հասարակությունը, անձնական եսի փոխարեն գրադվել աշխատավոր ժողովրդին հուզող հարցերով:

Արփիարյանը առաջ էր քաշում գրականության խորը գաղափարականության հարցը: Սկսվել էր այնպիսի մի վիճակ, երբ «գրականությունը որոշ ձգտումի մը չէր ծառայեր», «ինքնամոլորության հիվանդոտ գրականություն մը ծայր տալ սկսած էր»: Այժմ անհրաժեշտ էր այն ծառայեցնել շատ որոշակի մի նպատակի, ծառայեցնել ժողովրդին, որունիւ ու դտնել սոցիալական իշխանությունների դարձանը:

¹ «Արևիկ», 1885 թ. մարտի 7.

Հենց այդ էլ անհնար էր առանց բազմակողմանիորեն ճանաչելու կյանքը: Գրողը չպետք է լինի կարիներտալին մարդ, նա որպես հասարակության ամենաակտիվ անդամներից մեկը, պետք է լինի ամենահեռավոր և խուլ անկյուններում, բանվորական ավաններում, հանրակացարաններում: Ճշմարիտ կյանքը այդ վայրերումն է և ոչ Բերայի սայրներում: Հազարավոր պանդուխտ հայեր, բեռնակիրներ այդ խուլ անկյուններումն են քարշ տալիս իրենց կյանքը: Դրողը, վիպասանը պետք է ճանաչի իր օրեկտը, որովհետև «Ճշմարիտ վիպասան մը այնքան դրական գիտուն մըն է իր ճյուղին մեջ, որքան բժիշկ մը կամ երկրաչափ մը»:

Այն թե ինչու Արփիարյանը չէր ներում նույնիսկ այն մարդկանց, որոնց հայ գրականությանը մատուցած ծառայությունները բարձր էր գնահատել բազմաթիվ առիթներով, չէր խնայում, որովհետև նրանք էլ խուսափում էին կյանքի այդ «տգեղ» կողմերից, ինչպես այդ արել էր Գր. Զիլինկիրյանը իր «Ուղևորություն ի Կ. Պոլիս» ճանապարհորդական նկարագրությունների մեջ, որտեղ երևույթները դիտել էր «Ոչ փիլիսոփայական մտքով, ոչ քաղաքագետի աչքով, ոչ տնտեսագետի խոհերով», կարծեք դտնվեր «զբոսնաց պարտեզի մը մեջ», չէր տեսել աշխատավոր ժողովրդին:

Զիլինկիրյանը տեսել էր Պոլիսը, բայց չէր տեսել բուն ժողովրդին: Տեսել էր միայն վերնախավին, մի քանի ականավոր մարդկանց: Այլ էր Արփիարյանի պատկերացրած ժողովուրդը:

«Եվ ո՞վ է այդ ժողովուրդը... ոսկերիչն է, նավավարն է, ժամագործն է, դերձակն է... և պանդուխտները, անոնց կյանքը: Այդ տխրաժեմ հայերուն և ոչ իսկ ճանապարհին հանդիպած է Զիլինկիրյան»¹:

Արփիարյանը գրողներին չէր պատկերացնում որպես սոսկ դեպքերն արձանագրող, իրականության պասիվ արտացոլող: Նրանք օժտված պետք է լինեին ներկայի խոր ճանաչողությամբ, ապադան տեսնելու կարողությամբ: Նա պահանջում էր, որ գրողները «հորիզոնեն անդին նային, լինին ապագայի գուշակողները... նույնիսկ պատմական անցյալի պատկերումը պետք է նպաստի ապագայի պատրաստմանը, «դադափարական գրականությունը անցյալը կցուցնեն ու հեռավոր ապագան պնդորաստելու կնկրտի»:

Ապագայի այդ գուշակները, Արփիարյանի կարծիքով օրեկտիվ իրականությունը ճանաչելուց, նրա մեջ մարդկության համար շարիք տեսնելուց հետո պետք է հարց տան՝ «ինչո՞ւ այս շարիքները» և շարիքների դարմանը որոնեն սոցիալական ռեֆորմիայի մեջ: Նա հենց այդ բառերով էլ ձևակերպում էր իր մտքերը «Չարիքներուն դարմանը րեֆորմական հեղափոխության մեջ պետք է որոնել»:

Մերկացնելով բուրժուական կեղծ բարեպաշտությունն ու բարոյագիտությունը, որոնց հիմքում ընկած էր անառակությունը, այլասերումը, զեխ ու շվաշտ կյանքը, Արփիարյանը կոչ էր անում գրողներին առանց վախենալու իրենց մատը դնել բուն վերքի վրա:

Խոսքը մասնավորելով վիպասաններին, գրում էր, թե ընդհանուր վիպասաններն իրենց դյուբիշ գրիչներով ներկայացնեն մեր բնտանեկան վիճակը իր բոլոր իսկության մեջ: «Թող հսկանեն մեր սրտերը, լայց հեղափոխեն մեր բարբերը»:²

¹ «Արևիկ» 1884, թիվ 170:

² «Արևիկ» 1884, թիվ 39:

Գրողը ոչ թե ինքը պետք է մտածի, թե ինչ կասի հասարակությունը և առաջնորդվի հասարակական կարծիքով, փոխի իր ուղղությունը ըստ արված դիտողությունների, այլ հասարակությունը պետք է մտածի թե ինչ է ասելու գրողը, հրապարակախոսը այս կամ այն երևույթի մասին: Գրողը որպես հասարակության ավելի դիտակից խավի ներկայացուցիչ, պետք է լինի ավանդարդային դերում, ազդի հասարակական դյանրի վրա:

Արփիարյանը «գաղափարի սով» էր տեսնում այն մարդկանց մոտ, որոնք թողած ժողովրդին զբաղեցնող հրատապ հարցերը, հրապարակ էին հանում իրենց անձնական հույզերին նվիրված գործեր, ինչպես, օրինակ, այդ անում էր բանաստեղծ Տիգրան Սևթյանը, շրժ բանաստեղծություններն արտահայտում էին հոգեհետաքննություն, հուսահատություն, փախուստ իրականությունից:

Եթե Արփիարյանը Սևթյանի նկատմամբ համեմատաբար մեղմ էր արտահայտվում, ապա թունոտ էր ու խիստ այն մարդկանց նկատմամբ, որոնք ուղիղախոս, կատարելով սուլթանի կամակատարների սեփական պատվերը, հրապարակ էին նետում որևէ դավանական կամ այլ կարգի հարց, որանով զբաղեցնում մամուլը:

1888 թ. Հոռմի պապի որոշակի պահանջով հրապարակ է նետվում մի այնպիսի անկարևոր հարց, ինչպիսին է կրոնական, դավանաբանական «Դաշանց թղթի» հարցը: Այդ խնդրի արծարծումը իսկույն հայատառ թուրքերեն եսթուլիկական մամուլից թափանցում է հայ մամուլը ու երկար զբաղեցնում հասարակական կարծիքը: Առաջադիմական գրողները դժգոհությամբ հետևում են այդ դատարկ վեճի ընթացքին, մի քանի անգամ փորձում են ընդհատել և ուրիշ ավելի կարևոր հարցեր առաջ բաշել, սակայն վեճը զնալով մոլեգնում է: Արփիարյանը հարկադրված գրում է մի սուր հոդված, բացատրում այդ հարցի միանգամայն անիմաստ լինելը և գրում. «Ես իմ մասին շատ մտադրանքության մեջ չեմ, թե հոգին սուրբ որդիներն կթխի, հորե՛ն կթխի, թե երբեք: Խնդիր մը, որ իրենց գիտնալու գործն է: Ինչպա շատ ավելի որոշակի ձևակերպելով իր դիրքը, գրում է հետևյալ խիզախ տողերը.

«Մենք այդ «Դաշանց թուղթը» չենք ընդունիր... «Դաշանց թուղթին» համար կրսենք դա--շապ թուղթ է, եթե կուզեր, ընդունեցեք, ձեր գիտնալու բանն է»:

Ժողովրդին արթնացնելու, ցնցելու, միշտ օրվա հետ պահելու կոչ անող Արփիարյանը պոնում էր, որ գրական հրապարակը փաստակար գրքերից մաքրելու միակ նախապայմանը անողոր քննադատությունն է: Քննադատությունը կազդուրող, առողջացնող մի կարևոր գործոն է, որը ոչ մի ժամանակ փուցե սյներան անհրաժեշտ չի եղել, որքան 80-ական թվականներին, երբ ամեն մի մարդ իր ցնդաբանությունները մեջտեղ հանելով, հրապարակը ողողում էր փաստակար գրքերով:

Ինչաչո, սկզբունքային, առողջ քննադատությունը Արփիարյանը նմանեցնում էր վիրաբուժի դանակին, որը կարող է վերքը կտրելիս ցավացնել մարմինը, սակայն նպատակն է քուժել այն: «Խիստ քննադատություն մը երբեք անդամալույծ չընեն գրականությունը, ուրդեն տկար ծնած արարածներն անտարակույս շուտով հուսարեկ կլինեն, սակայն կորովի մտքերու, գո-

րավոր կամքերու քարգավաճման սթանչելի միջոց մ'է անաշու քննադատութիւնը»¹

Արփիարյանը նվազ կարևորութիւն չի տվել գրականության և հրապարակախոսության սկզբունքայնությանը: Նրա կարծիքով հասարակական ասպարեզ մտնող յուրաքանչյուր անհատի առաջին պարտականութիւնն է ամենից առաջ ճշտել իր դիրքերը հասարակական գաղափարական հոսանքներում, ունենալ իր որոշակի քաղաքական համոզմունքները և հետևողականորեն, ինչպիսի քաղաքական պայմաններ էլ լինեն, հավատարիմ մնալ այդ համոզմունքներին:

Նա թունոտ սատիրայով էր արտահայտվում այն խմբագիրների մասին, որոնք «հրապարակագրի կոչումը փաստաբանական գործի հետ շփոթելով», «մերթ այս դատին պաշտպան կը հանդիսանան, մերթ այն»: Այդպիսի խմբագիր է եղել Բյուզանդ Քեչյանը. որը 70-ական թվականների սկզբներին առաջադիմական ուղղութիւն հետևելով, ռեակցիայի սաստկացման տարիներին հետզհետե գլորվել էր դեպի պահպանողական ճահիճը, նրա «Արևելքը» 90-ական թվականներից հետո դարձել էր անպոյն մի վաճառականական հրատարակութիւն, «որուն խմբագրապետը հանրային միտքը կը ջանար ստամոքսաւոր» դարձնել, «ուղեղին ու սրտին տեղ փորն ու սրտվայնը» հուզել, «հայ ժողովուրդը հեռու պահելու համար դադափարական թռիչներու փորձանքներեն»:

Գրականութեան գաղափարականութեան հարցն այդքան շեշտակի կերպով առաջ քաշելով, Արփիարյանը գրականութեան զարգացման համար հիմնականում նշում էր երկու ուղի: Դրանցից մեկը հասարակական կյանքը բազմակողմանիորեն ճանաչելու և այն արտացոլելու գրողի կարողութիւնն է, իսկ երկրորդը՝ ուսման, դաստիարակութեան միջոցով ստացված գիտական պաշարի գույակցում գրական ազդեցութեանը:

Նրա կարծիքով, եթե որեւէ մեկը ունի գրական անուրանալի շնորհ և փորձում է գրել, ապա ամենից առաջ պետք է ուսանա կյանքի բազմակողմանի ճանաչողութեան հնարավորութիւն, մոտիկ լինի ժողովրդին: Եվ այս դեպքում արդեն Արփիարյանը չէր սահմանափակվում միայն Պուլխով, նույնիսկ նրա աշխատավարձական խափերի կացարաններով ու կենցաղով: Այդ չէր հայ գրողի բուն նյութը: Պուլխով Հայաստան չէր, կար մի ամբողջ գավառի հայութիւն: Որը ապրում էր իր միանգամայն սուրուն կյանքով ու կենցաղով, ունէր իր պահանջները, հոգսը, վիշտը: Սուլթանական բռնապետական ճնշումը, մասսայական ջարդերը, ներքին տեղական շահագործողների կեղեքումը հայ ժողովրդին դարձրել էին արյունաբամ և հասցրել անդունդի եզերքը: Ո՞վ պետք է գրողներ այդ ժողովրդին հուզող հարցերով, ո՞վ պետք է ցուցադրեր դավառի սրտաճմիկ ու տխուր պատկերը գրականութեան մեջ: Եթե մի կողմից այդ անհրաժեշտ էր հասարակական շահի տեսակետից, ապա մյուս կողմից՝ գրողի հաջողութիւնն էլ պայմանավորված էր այդ ճշմարիտ կյանքի հմուտ արտացոլումով:

Այն գրողը կարող է ամուր հիմք թողնել գրականութեան մեջ, մնայուն արժեքներ ստեղծել, որն իր ներշնչման աղբյուրը կդարձնի ժողովուրդը, նրանից կվերցնի իր ուժը, գրականութեան հյութը:

¹ «Արևելք», 1884, № 194.

Հիմնականում այս առաջին և կարևոր նախապայմանի հետ էր կապում Արփիարյանը արևելահայ գրականության կենսունակությունը: Արևելահայ մի շարք գրողներ՝ դուրս գալով անմիջապես ժողովրդի ծոցից, լինելով ծագումով գյուղացի (Ն. Աբովյան, Պ. Պողոսյան, Ղ. Աղայան և այլն) կարողացել էին մոտիկից ուսումնասիրել հայ ժողովրդի նիստ ու կացը, սովորությունները, հաղորդակից դառնալ նրա ապրումներին, ցավերին, յուրացրել էին ժողովրդի դարավոր կենսափոքր և այս բոլորը հարազատորեն վերարտադրել իրենց գործերի մեջ: Մինչդեռ արևմտահայ գրողները՝ կտրված մայր հողից, ապրելով աշխատանից հեռու, լավագույն դեպքում շփվելով միայն օտարացած մեջլանական միջավայրի հետ, հանդես էին գալիս կամ որպես օտար կենցաղի մեխանիկական տեղադրողներ հայ իրականության մեջ, և կամ որպես սոսկ կաթինհոտային գրողներ, որոնց ստեղծագործություններից անհնար էր գաղափար կազմել հայ ժողովրդի մասին:

Արփիարյանը այս միտքը հաջող կերպով արտահայտել է Տյուսաբի մասին խոսելիս: Նա Տյուսաբին համարել է մի հեղինակ, որի գործերը «կարգացողին հողին բերանը կբերեն»:

Ո՞րն էր Տյուսաբի «գրական դժբախտության», ճախողության պատճառը, այն, որ նա չէր ճանաչում հայ կնոջը, բայց ուզում էր ազատագրել նրան: Հայ կինը այն չէր, ինչ որ նա տեսել էր Պոլսի սալոններում: Գավառի կինը տարբեր էր, նա ուներ իր սեփական պահանջները, ամենից առաջ կարիք ուներ ազատագրվելու իր դարավոր տգիտությունից, ընտանեկան նահապետական կաշկանդումից: Տյուսաբը՝ իր ուսմանտիկ վեպերով փաստորեն պաշտպանում էր ֆրանսուհու դատը: «Հայ կինը, — գրում էր Արփիարյանը, — հայ հողին վրա է. ով որ անոր դատը պաշտպանել կուզե, պետք է որ հախ անոր կյանքը ուսումնասիրե հետը ապրելով: Ոչ ոք կրնա հայ կնոջ դատին պաշտպանությունը լրջորեն ստանձնել, պարզապես Տիկին Սթալ, Տիկին Ժորժ Սան, Տյումա Որդի կարդալով: Այս էր պատճառը, որ Տյուսաբը ոչ մի ազդեցություն չունեցավ հայ ընկերական կյանքի վրա»:

Արևելահայ գրողները օգտագործում էին ժողովրդի հարուստ բառապաշարը, նրա մտքի գոհարները, իսկ արևմտահայ գրողները շեշտը դնում էին ֆրանսիական ոճի վրա:

Արդյունքը լինում էր այն, որ գավառի ժողովուրդը շատ ավելի դժվար էր հասկանում պոլսեցի գրողներին, քան արևելահայերին:

Արևելահայ և արևմտահայ գրականությունների տարբերության մասին արտահայտվել են 80-ական թվականների դրեթի բոլոր աչքի ընկնող դեմքերը, եթե նրանք տարբեր հարցերում ունեցել են երբեմն շատ խոր տարակարծություններ, ասլա այս հարցում համակարծիք են եղել, որ արևելահայ գրականության հաջողության գաղտնիքը նրա մայր հողից սնվելու մեջ է:

Գր. Զոհրապը գրում էր.

«Ռուսահայ գրականությունը իր լեռնաբույս ծաղկի անծանակ ու թարմ հոտովը բուլած է զմեզ հմայելու համար: Մերը ջերմոցի մը մեջ հասած բույս մ'է, որուն օդը պակսելով, գույնն ալ նետած ու հոտը մարած է»:

Եթե 80-ական թվականների մտավորական շարժման այս ականավոր ներկայացուցիչը արևելահայ գրականության առավելությունը տեսնում էր ա-

¹ «Մատիս», 1892, № 398 ա:

մենից առաջ նրա բուն ժողովրդական էությունը և գաղափարականության մեջ, ապա Արփիարյանը բացի այդ հիմնական հատկանիշից, արևելահայ գրականության մեջ տեսնում էր երկու ուրիշ հատկանիշ։ Դրանցից մեկը թեման էր, մյուսը՝ այն ազդեցությունը, որ պալիս էր ուսական գրականությունից։ Արփիարյանը գտնում էր, որ արևելահայ գրականության խոշոր արժանիքներից մեկն էլ այն է, որ ի տարբերություն արևմտահայ շատ գրողների, արժարժում է սոցիալական հարցեր, քննության է առնում կյանքի ցավոտ կողմերը և որոնում է դարման՝ այդ ցավերի համար։

«Արեւիկեցիներն թշուառներու տառապանքի, դարման անոնց ցավերու, աշխատեցանք Արարատեան արդի մեր գրականութեան, Պատկանյան, Սուրբաբեկեան, Պերճ Պողոսեանի վաղուց անտի և արդ Մուրացեան, Շիրվանզադե, Հեռ և ուրիշներ, րնկերական ամեն խաղերու ակտիւններն կրնեն և կը պատրաստեն հանդիսարան մը Արարատեան ու կովկասեան հայոց գոնազան դասերու վարքի, բարքի, զգացումի, գաղափարի, ցավերու և խնդութեան»¹

Ինչ պրոբլեմներ էին առաջ բաշում Արփիարյանի թվարկած գրողները։ — Թե ինչու գյուղացիությունը աշխատում է և արդյունքը լցնում վաշխառուի պայանը, ինչու կրոնական հնացած, անպետք օրենքները կաշկանդում են մարդկանց, պահում նրանց ստրկամտության մեջ, ինչու աշխատավորը թշուառ է, պատանին անզոր թափառում է փողոցներում և այլն։

Արփիարյանը այն միտքն էր պարզացնում, թե օբեկտիվ իրականությունը բազմակողմանիորեն արտացոլող չեղինակը շատ ավելի կարող է նպաստել էյանքի ճանաչողությունը, քան որևէ այլ մասնագիտության մարդ։

Խոսելով Հեռի «Պանդուխտը» վիպակի մասին, գրում է.

«Հեռի այդ վիպակը իր լեզվովն ու ուղղությամբն այնքան ծառայություն կրնա մատուցանել գաղափարների ժողովրդական, որչափ չի կրնար մատուցանել ամենապերճախոս վարդապետը իր «Բարձրաթիշ քարոզովն» և մամուլն իր խորունկ քաղաքագիտական հոդվածներովը»²

Ժողովրդական ստեղծագործության վերահաման և մշակման պահանջով էր, որ Արփիարյանը երբեմն որոշ իրոնիայով էր խոսում «բարձր» կոչվող արվեստների մասին։ Նրա կարծիքով հայ լեզվականի անտաշ ու անմշակ երգը իր հուզականությամբ, հաճախ ավելի բարձր է, ավելի լավ է արտահայտում ժողովրդի տառապած հոգու տվյալտանքները, քան եվրոպական անձանոթ, թեկուզ հռչակավոր մի կոմպոզիտորի ստեղծագործությունը։

«Մի վ մեզմե վրդովում չղգար սրտին մեջ, երբ իրիկնապահին անցնելով տնակի մը առջևեն, լսն մորկան մը օրորը։ Մի՞թե այդ օրորն ալ գեղարվեստ չէ, ալ ո՞ր երաժշտական օրենքի համեմատ հորինված է, ո՞ր կոնսերվատորի մեջ այդ մայրը մշակած է իր ձայնը, ո՞վ կարող է տարալուծել մայրական օրորի ղեղեկությունը»³

Մինչդեռ որոշ էսթետ գրողներ, քննադատի հոդվածներ էին գրում եվրոպական երաժշտության նույնիսկ երկրորդական ներկայացուցիչների մասին, Արփիարյանը իր հոդվածներում հիացմունքով խոսում էր «Մոլոմոն սարկավազի» օգտակար ծառայությունների մասին՝ հայ ժողովրդական երգերի

¹ «Մասիս», 1889, № 3923.

² Նույնը.

³ «Մասիս», 1889 սեպտեմբեր.

հավաքման և ձայնագրման ուղղութիւնամբ, առաջինը հայ կյանքում ուղղունելով ապագա կոմիտասին:

Արփիարյանի այս դիրքավորումը որոշ վերապահությամբ էին ընդունում նրա մերձավոր ընկերները, իսկ քմծիծաղով՝ նրա գաղափարական հակառակորդները, որոնք քննադատում և մեղադրում էին Արփիարյանին այն բանի համար, որ նա հեռու է գեղարվեստական ճաշակից, «գրականության մեջ սգտակարը միայն կփնտռե»:

Արփիարյանը երբեք չի ժխտել համաշխարհային դրականության ու արվեստի մեծ կոթողներին, նա շատ բարձր է գնահատել անգլիական գրականությունից Շեքսպիրի, Բայրոնի, Ֆրանսիականից՝ Զյուգոյի, Դոդեի, ռուսական գրականությունից՝ Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենևի, Տոլստոյի ստեղծագործությունները, հիացմունքով է խոսել անվանի նկարիչների, երաժշտագետների մասին, բայց միշտ ունեցել է մի վերապահում, այն՝ որ կլասիկ արվեստի երկրպագուներ չպետք է պատճառ դառնա ներկայի մոռացման: Հունահռոմեական քանդակագործությամբ հրապուրվողի, սքանչացողի պարտականությունն է նաև հետաքրքրվել ժամանակակից հույնի և իտալացու կյանքով:

«... Մի՞թե ժամանակակից հույները չեն արժեք իրենց նախորդները, կամ ավելի ևս չեն՝ անոնցմե գերազանց: ... Արիստոտել ու Մովսես, Ադամ, Ծվա և Ոսկերբուան, Եզնիկ ու չեմ գիտեր ուրիշ ինչ, մեր կյանքն ատոնց կը նվիրենք: Ծերության կյանքով մաշած ու սարսռած առողջության շունչով կուզենք գորացնել մեր նոր սերունդը»:

Միամտությու չլինելը կարծել, թե Արփիարյանին հետաքրքրել է միայն նոր Հունաստանի հարցը: Հեշտովյամբ Հունաստան բառը պետք է փոխարինել արգելված Հայաստան բառով, և մեզ կներկայանա 80-ական թվերի դրույների ծրագիրը՝ ճանաչել ու պատկերացնել Հայաստանը, գրականության ու արվեստի մեջ արտացոլել հայ գյուղացու կյանքը:

Ո՞ր արվեստն էր բարձր դասում Արփիարյանը, այն արվեստը, որ խոսում է աշխատավոր ժողովրդի սրտի հետ, այն կտավն էր նրան հուզում, խանդավառում, որը արտացոլում է տառապած ու շարքաշ մարդու վիճակը: Ըստ նրա, ինչքան էլ բարձր արվեստով տրված լինեք Ռաֆայելի «Հիսուսի ալլակերպությունը», այնուամենայնիվ ինքը չաստ ավելի հաճույքով կդիտեր մի պանդուխտ հայի սլորտրեն:

Նա մեծագույն հուզականությամբ ու դովեստով է խոսել նկարիչ Պ Սրապյանի (1833—1898) «Մանուկ աղբար» նկարի մասին:

«Ո՞ր ճարտար նկարիչը — հարցնում էր նա, — կարող էր այդքան կենդանի ներկայացնել մի դեմք, որը բուն գործությամբ կը ցուացնե դարիքին բոլոր վշտերը: Հայրենի տան օջախին կարոտովը խանձվող պանդուխտին բոլոր ցավերը կը կարգայինք այդ դեմքին վրա»:

Արփիարյանը համեմատաբար քիչ է խոսել արվեստի հարցերի մասին, սակայն տվել է իր որոշակի պահանջը արվեստից: Նախ արվեստագետը, ինչպես գրողը, պետք է իր թեման վերցնի բուն ժողովրդից և երկրորդ չպետք է հանդես գա լուսանկարչի դերում, պետք է ընտրի տիպականը, այն էականը, որի մեջ արտացոլված պետք է լինի ամբողջը: Այլ խոսքով արվեստագետը,

¹ .Արևելք», 1890, № 1898,

² .Արևելք», 1884 № 46,

գրողը կամ նկարիչը պարտավոր է շեշտել, ընդգծել իրականության այն հատկանշական կողմերը, որոնք տիպական են որոշ երևույթների համար, և որոնց այդպիսի ընդգծումը պիտողի կամ ընթերցողի մեջ առաջացնում է որոշակի համակրություն կամ հակակրություն՝ ներկայացվող անձի կամ երևույթի վերաբերմամբ:

Հենց դրա մեջ էն արվեստագետ նկարչի (որին նա պատկերահան էր կոչում), և լուսանկարչի տարբերությունը. ռուսականարիչը հիշտ ու հիշտ կնկարե, պատկերահանը թերևս քիչ մը ճշտութենէ կը հեռանա, բայց նկարներուն մեջ իր սրտեն կը դնէ բան մը, որ կը լրացնէ նույնիսկ բնության մոռացածը, ցույց կուտա բնության վեր չհանածը:

Միայն հանրորեն օգտակար, տիպական թեմայի դուգակցումը ռեալիստական վարպետ կատարման, կտա արվեստի բարձր նմուշներ: Այս էր պատճառը, որ Արփիարյանը անտարբեր անցնում էր եվրոպական մայրաքաղաքների և Կ. Պոլսի սալոնները զարդարող անծանոթ մարդկանց՝ թագավորների, իշխանների պորտրետների առջևից. բայց կանգնում սքանչանում էր այնպիսի նկարի առաջ, ինչպիսին էր մեր նշած «Մանուկ ալբար» նկարը, որի մասին իր ունեցած հիացմունքն արտահայտում էր հետևյալ քնորոշ տողերով.

«Արվեստը կատարելագործած է զբնությունը: Տաղանդավոր պատկերահանը՝ շարժելով վշտամաշ ծերուկի սրտի ամենափափուկ լարերը, նրա աչքերուն մեջ ըմբռնած է հոգեբանական վայրկյանները, որոնց մեջ կհուզին նորա սրտի ճի տարվան քաշած ամեն մրրիկները»:

* * *

Արփիարյանի գրականագիտական այս հայացքները շատ ավելի որոշակի երևում են այն գնահատումների մեջ, որ նա տվել է արևելահայ և արևմտահայ մի շարք գրողների ստեղծագործություններին:

Զգտելով ստեղծել նոր, առաջադիմական գրականություն, նա հիմնականում ժխտել է մխիթարյանների ստեղծած դրաբար, հետադիմական ջերմոցային գրականությունը և, դրա ազդեցության տակ Կ. Պոլսում սկսված գրական շարժումը, կոչ արել գնալ դեպի աշխատավոր ժողովուրդը, նրանից վերցնել նոր գրականության սնունդը, հետևել ոչ թի Բագդասունիների, Հյուրմուզենների գծած ուղուն, այլ Աբովյանի, Խալքանդյանի, Պռոշյանի, Սունդուկյանի գրական ուղուն: Սրանց մոտ նա տեսել է հայ ժողովրդի դարավոր պայքարի ճիշտ արձագանքը, ժողովրդին դեպի որոշակի մի նպատակ առաջնորդելու կոչումը:

Ամենից առաջ Աբովյանը նրան ներկայացել է որպես մեծ հայրենասեր, ամբողջովին իր ժողովրդին նվիրված մի գրող, որը ապրել է, շնչել, բացառապես ժողովրդի համար:

«Աբովյանը ազգի սրտի հետ խոսեցավ իր «Վերքովն» ժողովրդի բարբառով, կտրուկ կերպով քնորոշել է:

«Վերք Հայաստանի» վեպի գաղափարական բովանդակությունը նկատի ունեն Արփիարյանը, երբ խոսելով Վիրդիլիոսի գործերի գրարար թարգմանության մասին, իր հակառակորդներին ասում էր, թե «Վերքի» մեկ տողն ան-

դամ չի փոխի գրարարամյունների «պաշտած Մշակակալն» և նմանքի հետ:

Արփիարյանը նույնպիսի քերթ վերաբերմունք է ունեցել ունուցիսն դեմոկրատ Մ. Նալբանդյանի ստեղծագործությունների նկատմամբ:

Նրբ 1876 թվականին հիմնվում է «Արարատյան» կրթական ընկերությունը, նա առաջարկում է ընկերությունը կոչել Մ. Նալբանդյանի անունով:

«Կփափագեի ընկերության անունը «Նալբանդյանց» դնել,— գրում է իր հուշերում Արփիարյանը:— Կովկասցի հեղափոխական բանաստեղծը գրաված էր մեր պատանեկության սրտերը: Սիրիք մեռած էր Նալբանդյանց իբր հեղափոխական ու «Ազատն առավածը» իր իսկ սրտին: Դուրս ժայթքած էր մեկ ցասումով...»

Նույնիսկ 90-ական թվականների սկզբներին, երբ ցենզուրական ցուցակներում արգելված անունների թվումն էին Նալբանդյանի, Միքայել Նալբանդյանի անունները, Արփիարյանը եզրափակում լեզվով արժեքավորում էր նրանց ստեղծագործությունները:

Այսպիսի վերաբերմունք ունենալով այդ երկու հեղինակների վերաբերյալ, հասկանալի է, որ Արփիարյանը նույնքան հիացմունքով պիտի խոսեր նրանց գրական ազդեցությամբ հրապարակ իջած Սեդրակ Տեր-Սարգսենցի «Շահենն ի Սիրիք» (1877 թ.) գրքի մասին:

Այդ վեպի մեջ Տեր-Սարգսենցը՝ սուր, ոչնչացնող քննադատության է ենթարկում ինչպես ցարական բյուրոկրատիան, ցարիզմի ազդալիս քաղաքականությունը, որի պատճառով Ռուսաստանը դարձել էր «ապատամիտ մարդոց բանտ», նույնպես և տնտեսական քաղաքական ավերի ունակցիոն պայմաններում գտնվող սուլթանական Ռյուսթիան: Տեր-Սարգսենցը առաջինն էր արևմտահայ իրականության մեջ, որ սոցիալական անհավասարությունը դարձրեց վեպի նյութ, ցույց տվեց, որ մինչդեռ Ս. Պոլսում հայ բուրժուազիան Էվրոպական երկրների մարդասիրության վրա հույս դրած խաղում է հայ ժողովրդի բախտի հետ, գավառում հայ գյուղացիությունը ապրում է ամենադաժան պայմաններում ենթարկվում կրկնակի, եռակի շահագործման ու ճնշման: Մի կողմից պարտքատերն է գյուղացու մեջքին նստել, մյուս կողմից՝ «թրով թվանքով մարդիկ», այսինքն՝ պետական պաշտոնյաները՝ և, վերջապես, «սևավոր մարդիկ», այսինքն՝ հոգևորականությունը:

Տեր-Սարգսենցի այս գիրքն էր, որ իր արժարժած գաղափարներով գրավում էր Արփիարյանի ուշադրությունը:

«Տեղական գրեց «Շահենն ի Սիրիք», որ սթանչելի նախատիպար մրն է այն գրական ուղղության, որուն պետք է հետևինք: Մեր սրտի զարգացումին, մեր լեզվի ու գրական հառաջդիմության համար Շահենը կարժե հազար Վիրգիլիոսե, հազար Ոսկերեբանե, հազար Հոմերոսե, հազար Եգնիկե ավելի»:

Ինչպես է գնահատել Արփիարյանը Համլոր Պարոնյանի ստեղծագործությունները:

Նա ըմբռնել է Պարոնյանի երգիծանքի էությունը, Պարոնյանի ծիծաղի տակ նա տեսել է մեծ երգիծաբանի դառն արտասուքը՝ ստացված կյանքի տառապանքից. հայ ժողովրդի թշվառ վիճակից: «Պարոնյանը սրտերու տիրեց զվարթությամբ, բայց այդ զվարթությունը դրսանց էր, սկեպտյան ծիծաղկոտ պատյանին ներքե հեգնությունը կծածկե սրտի գերագույն վշտերը, ինչպես պիտակ կնքոց մը կպատե դառնահամ սուլֆաթոնը» (խիսին):

Արփիարյանը մեծ դժբախտություն է համարել, որ Պարոնյանը «ճշգրիտ գրչով մը» տալով արհեստավոր դասի կյանքը, «ավելի իրապաշտական վերնիով մը» նկարագրելով «բարձրագույն մթնոլորտի մեջ ապրողները, մեծերն ու մեծիկները», հնարավորություն չի ունեցել Օրթագյուղի «բարձր դասի»՝ աամիրայական տների կյանքն ու կենցաղի մասին մի վեպ գրելու:

Այնուամենայնիվ, Արփիարյանը, որ իր սկզբունքներից ելնելով շատ օրեկտիվ գնահատական է տվել գրեթե բոլոր հայ գրողներին, նույնիսկ իր անձնական թշնամիների արժանիքները բարձր է գնահատել, Պարոնյանի նկատմամբ հղել է մասամբ անարդարացի: Անհնար է ընդունել, օրինակ, նրա այն պնդումը, թե «Պարոնյան նպատակ ունեցող գրագետ մը չէր, ոչ ծրագիր ուներ, ոչ մեթոդ», թե «ժամանակին տպավորության ներքե՝ օրվան ներշնչումին ազդեցությամբ կը գրեր ու կվերջացներ... ձգտում ունեցող գրագետ չէր»:

Հայտնի է, որ Պարոնյանի պեղարվեստական ստեղծագործություններն իրենց գաղափարական հագեցվածությամբ հզակի տեղ են բռնում ամբողջ հայ պրականության մեջ:

Ղ. Ալիշանին, Բաֆֆուն, Պատկանյանին, Մերենցին, Պեշիկթաշլյանին և այս խմբի մի շարք ուրիշ գրողների Արփիարյանը գնահատել է բացառապես որպես ազգային ազատագրական պայքարին արձագանքող, սովթանիզմի դեմ պայքարի գուրս գալու կոչ անող գրողների:

Ցույց տալու համար, որ Բաֆֆու երկերի հրատարակությունը Պոլսում պատահական մի երևույթ չէր և հետապնդում էր որոշակի նպատակ, մեջ բերենք Արփիարյանի խոստովանությունը «Խամսայի մեկիթությունների» հրատարակման նպատակի մասին:

«Դեռ մեզի շատ մոտ ժամանակի մը մեջ գոյություն ունեցող այդ տեսակ մը հայկական անկախության պատմությունը իբր դասախոսություն կը հանդիմանալայն ժողովրդին, որուն զպրոցներուն մեջ ազգային հին անցյալի ուսուցումն իսկ գրեթե արգելված կ'մնար»¹:

Ընտրելով Բաֆֆուն որպես քաղաքական պայքարի պրոչ, Արփիարյանը ըստ էության արտահայտում էր լիբերալ բուրժուազիայի գաղափարախոսությունը ազգային ազատագրական պայքարում:

Արփիարյանի կարծիքով ո՞րն էր Բաֆֆու վեպերի ամենամեծ արժանիքը, այն, որ «Բաֆֆի լավ քննած է մեր զգացմանց զարկերակը և գիտե՞րե՞ որ եւ լուզի համար հուսահատությունը մահու զանգակի խողանքն է... Բաֆֆի կը սարսուռ, իրեն հետ կը սարսուռի ժողովուրդն ալ: Պատմական վիպասանությանց մեջ սարսուռը կ'իսամեռ հողիներու և լիկտրականությունն է»²:

Նույն դիրքերից է մոտեցել Արփիարյանը Ալիշանին, նրան հրապարել է այն, որ Ալիշանը իր ստեղծագործություններով կարողացել է 50—60-ական թվականներին մեծ ազդեցություն թողնել ընթերցողների վրա:

¹ «Բանբեր պրականության և տրվեստի», Ա գիրք, էջ 194:

² «Արևելք», 1884, № 159:

Արփիարյանը, պետք է նշել, իր կյանքի վերջին տարիներին, երբ զգալի չափով սահմանազատվեց նեղ ազգային պայքարից և նկատելիորեն հանգեց սուղիական պայքարի գաղափարին, վերանայեց նաև իր մի շարք զնահատումները այս կարգի գրողների նկատմամբ: Ամենեին չփոխելով իր վերաբերմունքն Աբովյանի, Նալբանդյանի Սունդուկյանի և այլ գրողների նկատմամբ, մասամբ սրբագրեց իր բնութագրումները Պեշիկթաշլյանի և ուրիշ գրողների մասին, որոնց մոտ շեշտված էր նացիոնալիստական գաղափարախոսությունը: Երբ 1905 թվին լույս տեսավ Պեշիկթաշլյանի բանաստեղծությունների նոր հրատարակությունը, նա իր գրախոսության մեջ դժգոհություն հայտնեց, որ նույնությամբ արտատպել է Պեշիկթաշլյանի մի շարք գործերը, որոնք արդեն կորցրել էին իրենց այժմեականությունը և անհրաժեշտ չէր նրանց վերահրատարակությունը:

«Ընդհանրապես զգուշ պետք է կենանք,— գրում էր նա,— մեր գրողներուն բոլոր գրությունները լիակատար հավաքածոներով հրատարակելու մոլորումներ, ժամանակի որոշ շրջանի մը համար հեղինակները, երբ իրենց գործը կո տեսնեն, կը լմնցնեն, ալ թող հանգչին պատմության օթևանը»:

Ավելի որոշակի ձևակերպելով իր մտքերը, նա գրում էր. «Ըստե՛նագրուրյունը Եկեղեցի չէ. որպեսզի անփոփոխական գրաբառով աղոթե՛մք ու շահականե՛մք որդվոց որդի լսվին և հազար տարի առաջվան գաղափարները ազգե՛ ազգ ժառանգուրյամբ փոխանցվին»:

Այս այն օրերին էր, երբ հեռու Պետերբուրգից լսվում էր ռուսական առաջին ռևոլյուցիայի որոտը և Արփիարյանը վերանայում էր իր հին գաղափարները, փորձում կողմնորոշվել դեպի նորը ու պահելով գրական ուսուցչի ֆունկցիան, չէր քաջալերում սկսնակ այն գրողներին, որոնք գրական հրապարակ էին իջնում անկումային գաղափարներով և կամ ճոռոմ նացիոնալիստական ոտանավորներով: Ահա թե ինչու նույն այդ շիկացած օրերին, երբ Վարուժանը ջղածգորեն ու անհամբեր բախում էր հայ գրականության դուռը, իր «Սարսուռները» ցանում պարբերական մամուլի էջերում, Արփիարյանը ողջունում է նրան, բայց՝ անարկելով նրան շրջապատող ազգայնական միջավայրին, գրում է. «Բրդնիկ գեղը մեղի լավ բանաստեղծ մը տված է, եթե մթնոլորտեն խեղդամահ լմենի»:

Արփիարյանի գուշակությունը մասամբ իրականացավ: Նացիոնալիստական մթնոլորտը եթե չկարողացավ ամբողջովին խեղդամահ անել Վարուժանին, ապա շատ վնասեց նրա քնարին, ազգայնական որոշակի ուղղություն տալով նրա երկերի զգալի մասին:

Բաֆֆին ու Պատկանյանը հիմնականում խոսում էին թուրքական լծից ազատագրվելու մասին: Սունդուկյանը, Պոռչյանը, Աղայանը խոսում էին օտար և սեփական շահագործողների դեմ պայքարի մասին:

Աղայանի ու Պոռչյանի մոտ բարձր էր գնահատում Արփիարյանը նրանց երկերի խորը սոցիալական բովանդակությունը, նրանց ժողովրդայնությունը, ժողովրդի բառ ու բանին, կենցաղին ու սովորություններին այնքան մոտ լինելը, հմուտ կերպով օգտագործելը: Այն, որ նրանք իրենց գրական լեզուն էլ սովորել են ոչ թե գրքերից, գրաբարից, այլև բուն ակունքից՝ ուղղակի կյանքեն:

Պոլսահայությունը դեռևս 1874—75 թվերից բեմում դիտելով Սունդուկյանի պիեսները, հատկապես Պեպոյին իր հակառակորդ Զիմզիմովի դեմ, նրա մեջ տեսնում էր ամենից առաջ Պոլսի աշխատավոր շերտերի շահագործումը վաշխառու սարաֆների ու «ազնվաշուք» էֆենդիների կողմից:

Արփիարյանը այսպես է նկարագրել 1884 թվին Թիֆլիսում «Պեպոյից» ստացած իր տպավորությունը «Ապուշը» վիպակի առաջաբանում:

«Առաջին անգամն էր, որ կտեսնեի հայ թատերաբեմի մը վրա մեր ընտանեկան կենաց, մեր օրվան վշտերու պատկերները: Ինձ անծանոթ էր Տըփլիսու հայոց ժողովրդային բարբառը և սակայն հասկցա «Պեպոն» և հուզմեցա խորապես»:

Մի այլ առիթով անդրադառնալով նույն ներկայացմանը, գրում էր.

«Ինձ իրական կյանքի պատկեր մը չէ, պատկեր ոչ միայն սեփական ուսումնայոց, այլ նաև թուրքահայոց, եթե Պոլսիցի հայ թատերաբեմին ալ ուզեք թատերաբեմին վրա հանել մեր Արուսյունները, չեմ կարծեր, որ մրցման մեջ ետ մնանք»:

Շիրվանզադեի քննադատական ունակումը հենց առաջին օրերից գրավել է Արփիարյանի ուշադրությունը: Նա տաղանդավոր վիպասանի մոտ տեսել է ոչ միայն կյանքը հարազատորեն, մեծ տաղանդով նկարագրելու կարողություն, այլ այն, որ Շիրվանզադեն տենդենցով գրող վիպասան է, ձգտում է իր վեպերի միջոցով որոշակի վերաբերմունք ստեղծել իր նկարագրած կյանքի մասին:

Արսեն Դիմաքսյանի մասին Արփիարյանի գրած առաջնորդողում հենց այդպես էլ բնութագրվում է Շիրվանզադեի վեպը, «Ձգտում ունեցող գիրք մըն է, որ կրնա ազդեցիկ ըլլալ հանրային բարքերու վրա»:

Ինչպես էր ըմբռնում Արփիարյանը գրականության զարգացման համար անհրաժեշտ երկրորդ գործոնի՝ գրական ազդեցության հարցը: Նա երբեք չի միտել գրական ազդեցության անհրաժեշտությունը, գիտակցել է, որ տարբեր ժողովուրդներ, ստեղծելով իրենց արվեստն ու գրականությունը, օգտվում են մեկ-մեկից. «իրարմե փոխ կառնեն, իրարու փոխ կուտան. յուրաքանչյուր գրականություն իր տոհմային հատկությունները պահելով հանդերձ, ոգևորված է. բնդհանուր մարդկային շունչով մը», սակայն, գտնում էր, որ գրական ազդեցությունները միշտ չէ, որ դրական արդյունք են տալիս: Հաճախ անկուսմային, վնասակար գրքերը շատ ավելի հեշտ են երիտասարդության վրա ազդում, քան որևէ օգտակար գիրք:

Նրա կարծիքով՝ արևմտահայ գրականության մեծագույն դժբախտությունը եղել էր այն, որ ընկել էր արևմտաեվրոպական ռոմանտիկական գրականության ազդեցության տակ:

Արևմտահայ իրականության մեջ ավելի խոր արմատ էին գցում ոչ այնքան ֆրանսիական գրականության աչքի ընկնող դիմքերը, որոնք իրենց դեպարվեստական ստեղծագործություններով բարեբար ազդեցություն էին ունենում մտքերի վրա, շոշափում էին սոցիալական հուզուր հուրքեր (Հյուգո, Բալզակ և ուրիշները), որքան ցրական արժեքից զուրկ մի շարք վեպեր, որոնք տպագրվում էին փող վաստակելու նպատակով և ծառայում էին միայն երի-

¹ «Ապուշը», Կ. Պոլիս 1886, էջ 3.

² «Մասիս», 1887, № 3873.

տասարդության երևակայությունը դրգոելու, նրանց արտասովոր արկածների ուժեղ տպավորության տակ պահելու համար:

Ֆրանսիական այդ ռեակցիոն գրականությունը ազդում էր ոչ միայն անկազմակերպ երիտասարդության վրա, այլև բնորոպականացման հովերով տարված մտավորականության որոշ շնորհի վրա, այնպիսի մարդկանց, որոնք ֆրանսիականի կապկային ընդօրինակումը, ֆրանսիացի ծանոթ-անծանոթ հեղինակներից մեջբերումներ կատարելն ու նրանց անունների հիշատակումը համարում էին մտավորական զարգացման լավագույն չափանիշը:

Արփիարյանը Տեմիրճիպաշյանի գրական արտադրանքը համարել է գրական խոտան, միանգամայն անպետք ու ավելորդ մի բան: Չնայած այն բանին, որ նրա գրածները 10—20 ստվար հատորներ կարող են կազմել, բայց այդ «արհեստական և խաբեպատիր գրականությամբ» Տեմիրճիպաշյանը տեղ չպետք է ունենա հայ գրականության պատմության մեջ:

Ո՞րն էր Ե. Տեմիրճիպաշյանի ձախորդության պատճառը, այն, որ նա «ստացած էր այն կրթությունը, որուն հիմը ֆրանսերենի բնութագումն է, մեկտեղ քիչմըն ալ մատենագրական ծանոթություն»: Տեմիրճիպաշյանը՝ հեռու մնալով բուն գավառից, առհասարակ աշխատավոր ժողովրդից, սնվելով միայն ֆրանսիական ծաղկամաններից, «ոչ միւր նոր գրականության ընթացքին վրա ազդեց, ոչ ալ հանրային մտքին վրա տպավորություն մը ըողուց. վասն զի հիվանդոտ գրագետը եղավ»:

Տեմիրճիպաշյանը եզակի չէր: Ֆրանսերեն լեզուն սովորելուց հետո ֆրանսիական հեղինակներից մի քանի ցիտատներ պոկելով մամուլում, գրականության մեջ մարդանքներ անողների թիվը մեծ էր: Այդ շրջանի արևմտահայ գրականության, հրապարակախոսության, զեկուցումների ու ճառերի գրեթե յուրաքանչյուր հատվածում կարելի է հանդիպել մի քանի բնորոպացի մտածողների անուններին:

Հետևաբար Արփիարյանի պայքարը անհատ Տեմիրճիպաշյանների, որի դոր Ստյանների դեմ չէր, այլ գրական մի ամբողջ հոսանքի, որի պաշտամունքն արևմուտքն էր, արևմուտքի ռեակցիոն կուլտուրան:

Այսպիսի ժխտողական դիրք բռնելով ֆրանսիական վնասակար ազդեցության նկատմամբ, Արփիարյանն առաջ էր քաշում ֆրանսիականի փոխարեն ռուսական կուլտուրայի ու գրականության ծանոթացման անհրաժեշտությունը:

Հատուկ մի քանի հոդվածներում խոսելով այս մասին, նա միանում էր ֆրանսիական Ակադեմիայի անդամ Վոկյուեի այն պնդմանը, թե «Այլևս ուսումնատենչ երիտասարդությունը չի գտներ իր հոգեկան սնունդը ֆրանսիական մատենագրության մեջ: Տեղական գույն, անօրինակ դեպքերու ախորժ, երևակայություն, ահավասիկ ֆրանսիական գրականության հատկանիշներն. իսկ ռուսական գրականության մեջ կը փշե կյանքի շունչը, որ այնքան հրապուրիչ կրնժայն ռուսական մատենագրությունը ընկերական ամեն աստիճանի ուսումնասեր երիտասարդության: Սովի, անեմիի օրերը վերադարձած են ֆրանսական մատենագրության համար: Ռուսները ճիշտ ժամանակին կը հասնին և եթե ֆրանսացիք տակավին ընդունակ են մարսելու, իրենց արյունը պիտի վերանորոգեն ու կազդուրեն ռուսական արյունով»¹:

¹ «Մատեն», 1880, № 3924:

Ֆրանսիական այդ ապականված արյան ազդեցության դեմ էր, որ պայ-
քար էր մղում Արփիարյանը, դժվարին, վտանգավոր պայքար, այնպիսի մի
ժամանակաշրջանում, երբ Թյուրքիայում Ռուսաստանի անունը տվողը որպես
թշնամի հետապնդվում էր։ Անհնար էր ուղղակի գրել ռուս հեղինակների ա-
ռաջադիմական գաղափարների մասին, վեր հանել նրանց արժանիքները։ Ար-
փիարյանը ափսոսանքով էր նշում, որ «կարելի չէ գեթ առ այժմ ավելի ըն-
դարձակ գաղափար տալ ռուս դրականության նկատմամբ»։

Մինչ այդ՝ Ռուսաստանը արևմտահայերին ծանոթ էր միայն որպես արև-
ելքի մի հզոր պետություն, որից շատ բան էր սպասում հայ ժողովուրդը քա-
ղաքական տեսակետից։ Նրա կուլտուրական մի հզոր գործոն լինելու հանգ-
մանքն ուշադրության չէր արժանանում։ Ռուսական արվեստի, գրականության և
գիտության մասին շափազանց աղետ գաղափար ունեին արևմտահայերը և
այդ աղետ գաղափարներն էլ գալիս էին ոչ թե ուղղակի ճանապարհով, ռու-
սաց լեզվով կամ ռուսահայ գրականության միջոցով, այլ ֆրանսիական գրա-
կանության ու մամուլի արտացոլումով, երբեմն շեղ արտացոլումով։

Արփիարյանը արևելահայ գրականության մեջ տեսնելով ռուսական
կլասիկ գրականության ուժեղ ազդեցությունը, նրա օգտակարությունը, եկել
էր այն եզրակացության, որ ռուսական գրականությունը բարերար ազդեցու-
թյուն կարող է ունենալ նաև արևմտահայ գրականության վրա։

Այդ նպատակով էր, որ իր իմբագրած «Մասիս» (1886—89) և «Հայրե-
նիք» (1891—95) թերթերում կազմակերպված աշխատանք է կատարում մի շարք
ռուս գրողների կյանքն ու գործունեությունը արևմտահայ ընթերցողներին ծա-
նոթացնելու ուղղությամբ։

Դժբախտաբար համիդյան բռնապետության տարիներին դժվար, գրեթե
անհնարին էր ռուսական կուլտուրան և գրականությունը ազատ կերպով ծա-
նոթացնել ընթերցողներին, Առհասարակ արգելված էր առանձին աշխատու-
թյունների հրատարակությունը հատորներով։ Դրա համար էլ, Արփիարյանը և
նրա ընկերները ռուսական գրականությամբ ու կուլտուրայով հետաքրքրվելու
իրենց ձգտումը կապում էին արևելահայ գրականությունը ավելի լավ ըմբռնե-
լու անհրաժեշտության հետ։ Արփիարյանը՝ պատճառաբանելով «Մասիսի» է-
ջերում ռուսական գրականությունը լայն տեղ տրվելը, գրում էր.

«Մասիսի» ծրագրին մեջ է՝ ծրագրել արարատ-կովկասյան կյանքի ամ-
բողջ պատկերն, Առ այդ՝ անհրաժեշտ է մեկ կողմեն ուսումնասիրել ռուսա-
կան ոգին, ռուսական գրականությունը, օրենքները և կառավարական ուղղու-
թյունը, որպեսզի կարելի ըլլա գիտենալ քի ինչ ազդեցության ներքո կը
գարգանան Արարատ--կովկասյան հայերը»։¹

Այս պայմաններում լույս են տեսնում մի քանի հոդվածներ ռու-
սական կյանքի, գրականության, այդ գրականության գաղափարականության
մասին։ Հատուկ հոդվածներ լույս են տեսնում Լերմոնտովի, Տուրգենևի և
Պուշկինի, Դոնշարովի մասին։

Այդ տասնամյակում Արփիարյանը իր իմբագրած պարբերականներում
լույս է ընծայում Տուրգենևի արձակ բանաստեղծություններից մոտ 20 գործ։

Թարգմանություններ են կատարվում Պուշկինից և Լերմոնտովից։

Ո՞րն էր ռուսական գրականության այն արտակարգ ուժը, որ Արփիարյա-

¹ «Մասիս», 1889, № 3931.

նին կապում էր այդ գրականության հետ: Ամենից առաջ նրա խորը զաղափարականությունը: Ռուսական գրականությունն արժարժում էր գերազանցապես սուցիալական հարցեր, քննության էր առնում ոուս ժողովրդի տնտեսական ու քաղաքական կացությունը, մերկացնում էր ցարական ռազմաֆեոդալական ինքնակալության ռեակցիոն էությունը և հարազատորեն արտացոլում իրականությունը:

Ռուսական գրականության մյուս հատկանշական կողմը կյանքը վերափոխելու նրա կոչումն էր: Ռուս հանճարեղ գրողները օրեկտիվորեն արտացոլելով իրականությունը, երբեմն հանգում էին այդ իրականության ժխտմանը: Ռուս գրողներն իրենց տաղանդի ուժով կարողանում էին ազդել մասսաների վրա, «Հոն Դոգու», Խոլոտոյ, Դոստոևսկի իրենց վեպերով բարոյապես տիրապետած են այդ վիթխարի երկրին:

Արփիարյանի ու նրա ընկերների սիրած հեղինակներից մեկն էր Լ. Տոլստոյը:

Արփիարյանին շատ էր հուզում Տոլստոյի վեպերի թարգմանությունը, սակայն այդ տասնամյակում անհնարին էր թարգմանել այդպիսի գործեր: Նա հարկադրվում էր միայն այս կամ այն առիթով վեր հանել Տոլստոյի արժանիքները:²

Տարրեր տեսակետից է գնահատել Արփիարյանը Լեոնտովին:

Եթե ցարական կարգերի տաղանդավոր նկարագրությամբ Դոգուր, Դոստոևսկին, Տուրգենևը, Տոլստոյը մտքեր են նախապատրաստել ի նպաստ այդ կարգերի վերացման, և նրանց մտքերը կարող էին նույնքան հարազատ ընդունվել համիդյան դաժան բռնապետության տակ տառապող հայերի համար, ասլա Լեոնտովի մոտ արևմտահայ առաջավոր գրողները տեսնում էին իրենց ազգային ազատագրական պայքարին մոտիկից արձագանքող մի մեծ և տաղանդավոր հեղինակի:

Արփիարյանը ուսական գրականությունը և ոուս հեղինակներին չէր ծանոթացնում տարերայնորեն, ըստ պատահած նյութի կամ հեղինակի, այլ նշատարում էր ծրագրված աշխատանք, ընտրում հատկապես այն գործերը, որոնք ծառայում էին իրենց պայքարին: Երինակ՝ Լեոնտովի այն ստեղծագործություններն էին հետաքրքրում Արփիարյանին, որոնք պատկերում էին կոպկասի ազատատենչ լեռնականների կյանքը:

Պատահական չէր, անշուշտ, որ «Մասիս»-ի էջերում թարգմանվում էր ոչ թե Լեոնտովի լիրիկական բանաստեղծություններից մեկն ու մյուսը, կամ պոեմներից ասենք «Բեր», այլ թարգմանվում էր նրա «Փախստականը»:

Սքանչացումի տողերով նկարագրելով այդ թարգմանության պատմությունը, գրում է.

«Երեք օր վերջ թարգմանությունն ստացա. ցնծացի. սքանչելի էր. Լեոնտովի մասին բավական տեղեկություններ կարդացած եմ և նորա սիրա-

¹ «Մասիս», 1890, № 3932.

² Հետագայում 1908 թվի օսմանյան կոնստիտուցիայից հետո: Երբ մամուլի և հրատարակչությունների մասնակի ազատություն արվեց. Արփիարյանի զբնակից ընկեր Ե. Օտյանի առաջին գործն եղավ ուսական գրականության լավագույն նմուշների թարգմանությունը: Նա 1909 թվին թարգմանեց Դոստոևսկու «Էրիշտակարան մեռյալ անից» գործը, ապա թարգմանեց Տոլստոյի «Աննա Կարենինան», «Հարությունը», անշուշտ բոլորն էլ ֆրանսերենից:

հարներն են, երբ կարդացի թարգմանությունը՝ լերմոնտովը գտա... Թարգմանված ամեն մեկ բառ, ամեն մեկ տող կը մտռակե մեռ աշյունը»¹։

Արփիարյանի գրածներից երևում է, որ լերմոնտովի պոեմը հայ երփտասարդության կողմից ընդունվել է մեծ հափշտակությամբ։

«Հարուն ցնցեց շատ սրտեր,— գրում էր Արփիարյանը,— համենուտ տեղեկություններ կուզեն լերմոնտովի վրա»։

Այս ժլատ տողերը շատ բազմիմաստ են և խոսում։

Հնթերցողների այս պահանջը կատարելու համար էր, որ Արփիարյանը իր սեփական ստորագրությամբ համարձակվեց կենսագրական ընդարձակ տեղեկություններ տալ լերմոնտովի կյանքի ու գործունեության մասին։

* * *

Հանուն գաղափարական գրականության այսպիսի համառ ու տևական սլաքար մղող մի անձնավորություն էր, ահա, որ 80-ական թվականների կեսերից, կանգնած մի ամբողջ գրական սերնդի գլուխը, ուղղություն էր տալիս թե հրապարակախոսությանը և թե գեղարվեստական գրականությանը։

Արևմտահայ իրականության մեջ 80-ական թվականներին գրականությունը խոշոր դեր ուներ կատարելու մասսաներին պայքարի կոչելու, նրանց դեպի ապագան առաջնորդելու գործում։ Ռեակցիայի այդ տարիներին հայ հասարակական միտքը սնդեկ ու անառագաստ մի նավի նման տատանվում էր համիդյան ալեկոծ քաղաքական օվկիանոսում, մի խուլից զարնվում մյուսին ու աստիճանաբար գլորվում դեպի անդունդը։

Նոր գրականությունը ամենից առաջ պետք է նշեր մոավորական զարգացման որոշակի ուղի, հետապնդեր շնչտակի նպատակ։

Արփիարյանը հետագայում կատարել է ուշագրավ խոստովանություններ, որոնցից իմանում ենք, որ 80-ական թվականների ռեալիստական արձակը ամենևին էլ պատահականորեն ու տարերայնորեն չի զարգացել, ստեղծվել է որոշակի ծրագրով։

Եթե իմի բերենք Արփիարյանի տարբեր առիթներով կատարած այդ կրցկալը խոստովանությունները, ապա կարող ենք դուրս բերել մոտավորապես հետևյալ ծրագիրը։

ա) գրականությունը ծառայեցնել որոշակի մի նպատակի և նախապատրաստություններ տեսնել ապագայի համար։

բ) մի կողմից սահմանազատվել գրական հին ուղղություններից (ռոմանտիզմ, կլասիցիզմ), պայքար մղել դրանց դեմ, մյուս կողմից՝ զարկ տալ կյանքը հարազատորեն արտացոլող, այն վերափոխելու կոչում ունեցող ռեալիստական արձակ գրականության։

գ) քաջալերել, առաջ քաշել դրական այնպիսի ուժերի, որոնք հեռու են եղել արեմտաեվրոպական ռեակցիոն գրական ազդեցություններից, որոնք իրենց դավառական ծագումով, գավառի հետ ունեցած անձնական ու թղթակցական կապերով հաղորդակից են աշխատավոր հայ ժողովրդի հոգեքր ու մտավոր ուժերին։

դ) գրական ազդեցության հարցում արևմտաեվրոպական, հատկապես

¹ «Ծախ», 1884, № 3878.

Ֆրանսիական ազդեցության փոխարեն նախապատվությունը տալ ռուսական գաղափարական գրականությանը:

Արփիարյանի կայծիքով անցել էր ռոմանտիկ երազների շրջանը, երազներ, որոնք այնքան խանդավառել էին հայ բուրժուազիային՝ ռուս-թուրքական պատերազմի տարիներին: Այժմ այդ երազների պատրանքների վարագույրը պատռվել էր ու երևում էր կյանքը իր դաժան միակությամբ, երևում էր նախ պոլսահայ մեղանական խավերի անկումը, օրեցօր դեպի այլասերում ու ապականություն գլորվիր: Ըստ այնմ էլ հիմնականում հետևյալ խնդիրներն էին նյութ դառնալու ռեալիստական նոր պրականության:

1. Ամենից առաջ՝ հարազատորեն պատկերելով բուրժուական ընտանիքներում տիրող այլանդակությունները՝ անբարոյականությունը, այլասերումը, խաբեբայությունը, ծուլությունը, սուտն ու կեղծիքը, ցույց տալ որ արտաքուստ դեպի «եվրոպականացում» գնացող այդ կյանքը ըստ էության գնում է դեպի կործանում, նեխում, և որ բուրժուական միջավայրում ստեղծված հասարակական կարծիքը, որի հենման կետն էր կրոնը, ռիինականացնում էր, արդարացնում այդ շաւիքը:

Այս ցավոտ հարցերն էին արծարծում Արփիարյանի «Կյանքի պատկերներ» ընդհանուր վերնագիրը կրող նովելները («Ռատապարտյալը», «Երազի մր գինը», «Կատակ մը», «Ապուշը» և այլն):

2. Անհրաժեշտ էր երևան հանել նույն այդ հարուստ դասակարգի շահագործող, կեղեքող էությունը, ցույց տալ, որ հայ հարուստը նույնպիսի դաժանությամբ է ճնշում ու շահագործում հայ աշխատավորին, հնչյեա այդ անում է որևէ օտարազգի վաշխառու կամ կապիտալիստ: Այս հարցը հատկապես տրված է Արփիարյանի «Հարուստին կոչումը» նովելում, որտեղ հայ շահագործողի զոհերը՝ Բալուցի պանդուխտները ըմբռնելով, որ «մեր հայուն մեզի ըրածները» ամեն ինչ «մոռացնել կուտան», զայրագին կոչում են՝ «Մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ»:

3. 80-ական թվականների ռեալիստ գրողների ծրագրի մեջ էր նաև հայ հարուստների, այսպես կոչված «ազգային բարերարների» հակաժողովրդական գործունեության մերկացումը, ազգային հաստատություններում (Պատրիարքարան, Ազգային ժողով, Ազգային հիվանդանոց) նրանց սանձարձակ գործունեության ցուցադրումը: Այս հարցերն էին արծարծում Արփիարյանի «Ռատապարտյալը», «Դերասանուհին» նովելները, Գ. Զոհրապի «Ներսեսը», «Լուսահոգին» և այլն:

4. Անհրաժեշտ էր ռեալիստական վառ վրձինով ցուցադրել գավառից Կ. Պոլիս թափվող հազարավոր պանդուխտ հայերի թշվառ վիճակը, պանդուխտներ, որոնք տնտեսապես հետամնաց, արդյունաբերությունից զրեթե զուրկ Թուրքիայի մայրաքաղաքում հնարավորություն չունենալով գեթ գործսրաններում աշխատելու, բացառապես կատարում էին բեռնակրություն, պահակություն, սևագործ բանվորություն և Պոլսի սալահատակների վրա քարշ տալով իրենց կյանքը, քայքայվում էին թե ֆիզիկապես, թե բարոյապես: Այս թեմայով էլ Արփիարյանը և նրա գրչի ընկերները գրում են մի քանի նովելներ ու ակնարկներ:

5. 80-ական թվականների այս գրողների ծրագրում առանձնահատուկ տեղ էր թռնում հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարը, որի պրոպա-

դանդան ամենից դժվարն էր ու վտանգավորը քաղաքական այդ խստագույն սլայմաններում: Չնայած դրան, Արփիարյանը և նրա ընկերները որոշակի գործ են կատարել նաև այս ուղղությամբ: Համիդյան բռնապետության տակ ապրող երիտասարդությանը խիզախություն, համարձակություն, բռնապետության գեմ պայքարելու կարողություն պատվաստելու նպատակով էր, որ Արփիարյանը գրում է իր «Կովկասյան հիշատակները», որոնց մեջ խոսվում էր Կովկասի աղատատենչ լեռնականների կյանքի, կենցաղի ու պայքարի մասին:

Իր գրչակից ընկերների ու՛ր կողմերն էր արժեքավորում Արփիարյանը: Նա բարձր էր գնահատում Զոհրապի ստեղծագործությունների թե՛ ղեղարվեստական և թե՛ իդեալատիկոզմը: Որպես ղեղարվեստագետ Զոհրապը ուներ «առաջնակարգ հատկություններ», երևույթներ տեսնելու, տիպականը վեր հանելու զարմանալի կարողություն, երգիծական անուրանալի շնորհք, որն ավելի էր շեշտում նրա նովելների ուժը, «ի՞ր ներկայացրած տիպարներուն ծիծաղելի կողմերը շատ որոշապես դուրս կցատկեցնե, անոնց բերանը դրած խոսքերովը, անոնց դեմքերուն, զգեստներուն, բնակարաններուն նկարագրությամբը»:

Զոհրապի ստեղծագործության գաղափարական կուլմին անդրադառնալով, Արփիարյանը նշում էր, որ նրա յուրաքանչյուր նովելը հետապնդում էր որևէ նպատակ, արձագանքում հուզող յրևէ հարցի և, որ խիստ կարևոր էր, Զոհրապը «Իր թռեր հատկապես հարուստ դասակարգին վրա», զբաղվելով «այդ դասակարգին հավակնություն, ամբարտավանություն, կեղծավորության ու այլանդականորեն եվրոպականացման» քննադատությամբ: Եվ եթե Արփիարյանը որևէ վերապահություն ուներ Զոհրապի նկատմամբ, այն էր, որ Զոհրապի նկարագրած «արարածները ատելու փորձությունը չես ունենար»: «Հենդիակը ավելի կառեկցող մըն է, քան թե ատող մը»: Արփիարյանը հայ գրականության թերություններից մեկն էլ համարում էր այդ «ատելության տկարությունն ու գթության ուժգնությունը»:

* * *

1905 թվի ռուսական առաջին ռևոլուցիայի օրերին Արփիարյանը գաղափարական որոշ շրջադարձ ապրեց: Նա ողջունելով ռուսական առաջին՝ բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիան, ավելի որոշակիորեն այն կարծիքն էր պաշտպանում, թե ով ինչ ուզում թող ասի կամ վրի, հայ ժողովրդի բախտը կապված է Ռուսաստանի հետ, մանավանդ Ռուսիոթիո հպատակ Հայաստանի ապագան Ռուսիո կյանքեն կախում ունի»:

Իր ամբողջ հրապարակախոսական գործունեության ընթացքում ցարիզմի նկատմամբ թշնամական դիրք բռնող Արփիարյանը ռևոլուցիայի այդ օրերին ավելի պարզ ըմբռնում էր, որ «Հերովդես—Համիդ—Նիկոլա... նույն արյունաբեր ու բռնապետներն են»:

Արփիարյանի գաղափարական շրջադարձի այս օրերին է ա՛յա, որ նա վերանայում է նաև իր դրականագիտական մի շարք ըմբռնումները: Նա դրովաում է Վ. Փափազյանի «Անտառը շարժվում է» պատկերը, և, որ ամենից կարևորն է, 1905 թվականի հոկտեմբերյան օրերին նա ընթերցողներին ծա-

1. «Թանրեր գրականության և արվեստի», Բ գիրք, էջ 171:

նոթացնում է արդեն ուրիշ մեծ մտածող Գերցենի կյանքի և ստեղծագործության հետ, նշում, որ Գերցենն այն մեծ ուրիշ հայրենասերն էր, «որ 19-րդ դարու երկրորդ կեսին իր հայրենի հրկրեն տարագիր, և՛վրուպա ապաստանած, իր հրապարակախոսություններովը ամբողջ Ռուսաստան մը ցնցեց» և որ նա «վաղվան Ռուսիան պատրաստողներեն մեկն է»:

Արփիարյանը իր ընթերցողներին ծանոթացնում էր Գերցենի «Մյուս փից» աշխատությունը և նշելով այն փաստը, որ Գերցենը իր այդ գործը նվիրել է որդուն, գրում էր.

«Մենք ալ մեր երիտասարդներուն, մանաւանդ մեր պատանիներուն կը հանձնարարենք «Մեկալ Ափենը»:

Արփիարյանի այս շրջանի գրականագիտական ըմբռումներն իրենց արտացոլումն են գտել ռեզիուցիայի օրերին նրա գրած «Խնդրամոլիկ աղջիկը» («Ուկի ապարանջան») նովելում, որի քննարկումը սակայն ներկա հոդվածի սահմանից դուրս է: